



« ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ԳԱՆ » ԳՈՒԿ . ԺԲ . 46 .

ՀԱՏՈՐ ԺԲ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ , ՅՈՒՆԻՍ 1 , 1883

ԹԻՒ 6



ՍԿՈՒՏԻՈՑ ԹԱԳԻՆ ՊԱՀՈՒՄԸ

ԱՊՊՎՏԻՈՑ ԹԱԳԻՆ ՊԱՀՈՒՄԸ  
Այս պատկերը կը ցուցնէ նշանաւոր գէպը մը Սկովտիոյ պատմու-

թեան մէջ : Երբ Յակոբոս Զ . Սկովտիոյ թագաւորն , տմբարձաւ Անգղիոյ գահը , Սկովտիոյ թագը չբերաւ Անգ-

ղիա , այլ թողուց զայն ի ինձանս Լորտ Մար անուն ազնուականին : Շատ տարիներ ետքը կարողութի ա-

ուսման թագաւորութեան տաճան քաղաքային պատերազմ մը ծագեցաւ, և որպէս զի Անդրկապից կարող չըլլան յափշտակել Սկովտիոյ արքայական նշանները, Սկովտիոյ զինեցին զանոնք Տրնոգ-էրի գրեական որ էր ամուր բերդը Գերմանական ծովուն Սկովտիական եղերքը, ժայռի մը վերայ: Քրոմուէլի Անդրկապի բանակը պաշարեց այն բերդը, և թէև պահպան զօրքն արտթեամբ դիմադրեցին, սակայն յայտնի էր թէ բերդն անձնատուր պիտի ըլլար, և արքայական նշանները պիտի իյնային պաշարող բանակին ձեռքը: Այս պարագայից մէջ հնար մը խորհուրդ տուան պատուական մնացորդները պահպանելու: Սկովտիոյ քարոզչի մը կինը, Տիկին Կրանձէր, թողտուութիւն ստացաւ պաշարեալ բերդն այցելելու, և բերդին հրամանատարին կինը, Տիկին Օկելի, անոր յանձնեց արքայական նշանները: Տիկին Կրանձէր պահեց թագն իւր զգեստին տակ, բայց սուրը ծածկեց վուշի խուրձերումէջ, և դրաւ զանոնք սպասուհոյ մը ուսերուն վրայ: Այսպէս Տիկին Կրանձէր և անոր սպասուհին անցան պաշարող բանակին մէջէն, և բնաւ կասկած չեղաւ թէ արքայական նշաններն անոնց վրայ էին: Պաշարող բանակին հրամանատարն ինքը շատ քաղաքավարութեամբ օգնեց քարոզչին կնոջ ձի հեծնելու, և չէր երևակայեր թէ տիկնոջ քովն էր այն բանն զոր ձեռք բերել այնչափ կը փափաքէր պաշարող բանակը:

Վերի պատկերին մէջ կը տեսնուի թէ քարոզչին և անոր տիկինն ինչպէս դրին Սկովտիոյ պատուական թագը եկեղեցւոյ սալայատակին ներքև: Սուրն եկեղեցւոյ մէջ ուրիշ տեղ մը պահուեցաւ: Բերդն անձնատուր ըլլալէն ետքը պաշարող բանակին հրամանատարը շատ ցաւեցաւ երբ բերդին հրամանատարը, Օկելի, ըսաւ անոր թէ արքայական նշանները հոն չէին, և չէր գիտեր թէ ուր էին: Կառավարիչ Օկելիի կինն առանց իւր ամուսնոյն գիտութեան տուած էր արքայական նշանները քարոզչին կնոջ կառավարչին և անոր կինը բանտ դրուեցան, և երկար ատեն բանտարկեալ մնացին, բայց չյայտնեցին թէ քարոզչին կինը տարած և պահած էր արքայական նշանները: Անդրկոյ մէջ թագաւորութեան վերահաստատութենէն ետքն արքայական նշաններն իրենց պահուած տեղերէն բերուեցան, և անոնք որ այն նշանները հա-

ւատարմութեամբ պահած էին վարձատրուեցան արքայական գերդաստանէն:

Հիմա Էտիոպոյ այցելողք կրնան տեսնել նոյն թագն և սուրը որ պահուած են դղեկին մէջ:

ՀԱՄԵՏՏՈՒԹԻՒՆ ՎԱՐՁՍՏՐԵԱԼ

Գաղտնի մէջ սույլի ատեն, հարուստ մը քաղաքին աղքատ տղոցմէ քսան տղայ հրաւիրեց իւր տունը, և ըսաւ անոնց, «Սա կողովին մէջ կայ ձեռնէ իւրաքանչիւրոյ համար մէկ մի նկանակ, առէք զանոնք, և ամէն օր այս ժամուն ե-



ՔՐԵՄԼԻՆԻ ԳՈՒՐԸ

կէք հոս, մինչև Աստուած լաւագոյն ժամանակներ տայ մեզ:

Տղայք առնուլ կողովը սկսան վիճիլ և կռուիլ հացերուն համար: Իւրաքանչիւր կը ջանար առնուլ մեծագոյն նկանակը, և ի փոխձանի մեկնեցան՝ առանց շտրհակալ ըլլալու իրենց բարերարէն: Փրանկիսկա միայն, աղքատ բայց բարեքիչ աղջիկ մը, կեցաւ մեկուսի համեստութեամբ և առաւ փոքրագոյն նկանակը որ մնացած էր կողովին մէջ, և շտրհակալութեամբ համբուրելով բարերար մարդուն աջը՝ գնաց իւր տունը հանդարտութեամբ և վայելչութեամբ: Երկրորդ օրը տղայք նոյնպէս չարաչար վարուեցան, և Փրանկիսկայի այս ան-

գամ մնաց փոքրիկ նկանակ մը որ հազիւ միւսներուն կէսն էր: Բայց երբ տուն գնաց, և հիւանդ մայրը կտրեց հացը, փայլուն փայլուն արծաթ դրամներ դուրս թափեցան անկէ:

Փրանկիսկայի մայրը զարմանալով ըսաւ անոր, «Փրանկիսկա, հիմա հիմա ես տար այս դրամները, ասոնք թերեւս սխալմամբ ինկած են խմորին մէջ:»

Փրանկիսկա տարաւ դրամները, բայց բարերար անձը յանձն չտուաւ ընդունիլ գանձը: «Ոչ, ոչ,» ըսաւ, «սխալում չկայ. դրամները ես դնել տուի այն փոքրիկ նկանակին խմորին մէջ և այնպէս եփել տուի նկանակը քեզ փորձատրելու համար, բարի աղջիկս: Եղիք միշտ այսպէս գոհացող, համեստ և զգոն: Ի՞նչ որ կ'ընարէ մանուածդ սակաւութեան դո՛ւր ըլլալ քան շատի համար կռուիլ, կ'ընդունի իւր բոլոր կենաց մէջ ի վարձ այնպիսի բաներ որ պատուական են քան այն դրամները որ քու նկանակէդ ելան:»

ՔՐԵՄԼԻՆ

Մինչ կը պատրաստենք Աւետարեթի այս թիւը, Մոսքուայի մէջ ուրախութեան մեծ տոն կ'ըլլայ Բուսիոյ կայսեր թագադրութեան հանդիսին համար: Աւստի յարմար կը համարինք մեր այս թուոյն մէջ դնել երկու պատկեր, որոց միոյն մէջ կ'երևի Բուսիոյ ամենէն նուիրական վայրը, այսինքն Քրէմլինի բերդը, և միւսոյն մէջ կը տեսնուի Քրէմլինի նուիրական դուռը:

Քրէմլին է Մոսքուայի հին միջնաբերդն, և շրջապատուած է բարձր պատով: Այս պատին մէջ է Եուսնի աշտարակն, որ պատկերին մէջ տեսնուած բարձրագոյն շէնքն է, և կան նաև երեք եկեղեցիներ: Այս եկեղեցիներէն մին է Վերափոխման եկեղեցին, յորում կը կատարուի թագադրութեան հանդէսը. երկրորդն է Միքայէլ հրեշտակապետի եկեղեցին, և երկրորդն է Աւետման եկեղեցին, ուր մկրտուած և ամուսնացած են բազումք ի կայսերաց:

Բուս եկեղեցեաց մէջ անդրի արձաններ չկան, բայց կան սրբոց պատկերներ, որոց մեծ յարգ կ'ընծայէ Ժողովուրդը: Թող արուած չէ երաժշտական գործիք գործածել Քրէմլեկեղեցեաց մէջ, բայց ըստ վկայութեան ճանապարհորդաց, Բուսաց եկեղեցական երգեցողութիւնները շատ քաղցր են:

Կառավարութիւնը մեծ զգուշութիւն ըրած է որպէս զի դաւ չդործուի թագադրութեան հանդիսին առանձն : Օտար տէրութեանց կողմէն շատ բարձրաստիճան մարդիկ ներկայ դասուած են հանդիսին, որ կատարուեցաւ մայիս 13/27 րն : Այս մեծ դէպքին առթիւ Մոսքուայի մէջ քանի մ'օրեր ուրախութեան տօն կ'ըլլայ : Մարդկային ընկերութեան բարեկամը կրմաղթեն թէ նա, որ կոչուած է կառավարել Բուսական մեծ ազգը, ընդունի Աստուծոյ իմաստութիւն, որպէս զի խոհեմութեամբ և արդարութեամբ կառավարէ ազգը :

մեր ներկայութեան ձկանդ գինը թող վճարուի :” Ձկնորսը պառկեցաւ, և երբ յիտուն գաւաղանի հարուած տըրուեցաւ անոր, “Կեցիր, կեցիր” գոչեց ձկնորսը, “այս դործին մէջ ընկեր մ'ունիմ և իրաւունք է որ նա ալ իւր բաժինն առնու :” “Ի՞նչ, աշխարհիս մէջ այսպիսի երկու խենդեր կա՞ն,” ըսաւ ազնուականը, և յարեց, “բո՛ւր է ընկերդ, յայտնէ մեզ անունն և տեղը, և մենք մարդ զրկեմք զայն հոս բերելու :” “Բնկերս դասնելու համար հեռուն երթալ պէտք չէ” ըսաւ ձկնորսը, բուն քու դրանդ քով կեցած է նա իբրև դռնապան : Երբ ձուկը հոս կը բերէի, դռնապանը չթա-

ԿՈՒՔԱԸ ԵՒ ԿՈՎԱՐԱԾ ՏՂԱՆ  
Սկովսիացի ազնուական մը, որ երկրորդ օրծութիւնը շատ կը սիրէր, կով մը գնեց գրացի ազնուականէ մը : Կովը հետեւեալ առաւօտ տուն պիտի զրկուէր : Առաւօտուն կանուխ երբ դուքսը պտտելու ելած էր, տղայ մը տեսաւ որ ի զուր կը ջանար կովը գէտ ազնուականին տունը տանել : Կովը շատ խեռ էր, և խեղճ տղան չէր կրնար զայն կառավարել : Տղան ջճանչնալով դուքսը պտտաց անոր, “Աղէ, մարդ, հոս եկուր, և օգնէ ինձ այս կենդանին վարելու :” Դուքսը կամաց կամաց յառաջ քայլեց կեղծելով թէ չէր տեսներ տղան որ զնա օգնութեան կը կոչէր : Վերջապէս, տղան տեսնելով որ մինակ պիտի չը կրնայ կովը տանիլ, վհատեալ կերպով ազաղակեց, “Հոս եկուր, մարդ, և օգնէ ինձ, և ինչ որ ընդունիմ կէսը քեզ կու տամ :” Դուքսը գնաց, և օգնեց : Մինչ կովը կը տանէին, դուքսը հարցուց տղան, “Որչա՞ն կը կարծես թէ պիտի ընդունիս այս աշխատութեանդ համար :” “Չեմ գիտեր,” ըսաւ տղան, “բայց վստահ եմ թէ բան մը պիտի ընդունիմ, վասն զի սա մեծ տան մէջ բնակողները մարդասէր և առատաձեռն մարդիկ են :” Երբ հասան տան մօտ փողոց մը, դուքսը տղէն բաժնուեցաւ ի ծածուկ, և տարբեր ճամբով մը տուն հասաւ, և մատակարարը վար կանչելով ձեռքն ոսկի մը դրաւ և ըսաւ, “Սա ոսկին տուր այն տղուն որ կը բերէ կովը :” Դուքսը մատակարարին այս պատուէրը տալէն ետքը դարձեալ եկաւ փողոցին ծայրը ուր տղէն բաժնուած էր : “Վա, ի՞նչ ընդունեցիր,” հարցուց դուքսը : “Շիլլին մը” (վեց դահեկան), ըսաւ տղան, “և ահա անոր կէսը քեզի :” “Բայց շիլլինէ մը աւելի ընդունեցիր,” ըսաւ դուքսը : “Ոչ,” ըսաւ տղան “այդ է իմ բոլոր ընդունածս, և կարծեմ բաւական է :”

ՇԱՀՈՒՆ ԿԵՍԸ

Ազնուական մը, որ ծովեզրէն շատ հեռու գղեկի մը մէջ կը բնակէր, հարսանիք ունէր, և իւր բարեկամները հրաւիրած ըլլալով խնջոքի՝ շատ համադամ կերակուրներ և ընտիր պտուղներ պատրաստել տուած էր, բայց ձուկ չկար, վասն զի ծովը շատ ալեկոծ էր : Խընջոքի առաւօտ աղքատ ձկնորս մը եկաւ գղեկ կը մեծ վահանաձկով մը :

Տան մէջ մեծ ուրախութիւն կար, և ձկնորսը իւր ձկով բերուեցաւ մեծ սենեակ մը, յորում ազնուականը իւր կոչնականաց մէջտեղ կեցած էր :

“Բնտիր ձուկ մը”, ըսաւ ազնուականը, “գիւնը որոյ է, և անմիջապէս պիտի վճարուի : Ո՞րչափ կ'ուզես :”

“Իւ ոչ դահեկան մը, տէր իմ,” ըսաւ ձկնորսը, “ստակ պիտի չառնեմ, միայն կ'ուզեմ որ կոնակիս հարիւր դաւաղանի հարուած տաք, այս է միակ գինը զոր կը պահանջեմ ձուկիս համար :” Ազնուականն և հրաւիրեալք քիչ չզարմացան այս տարօրինակ սակարկութեան վրայ, բայց ձկնորսը իւր խօսքին վրայ հաստատ կեցաւ : Ի զուր ջանք եղաւ համոզել զնա որ ձկան համար յարմար գին մ'ուզէ : Ի վերջոյ ազնուականը ըսաւ. “Վա, այս անձը զարմանալի խորհուրդ մ'ունի. բայց մենք ձուկը ձեռքէ հանելու չենք : Ուրեմն կամացուկ մը պառկէ և հոս



ՔՐԵՄԼԻՆԻ ՌԵՐԸ

դուց դիս ներս մտնել, մինչև որ ինէ խօսք առաւ թէ վահանաձուկիս համար ինչ որ առնեմ, կէսն իրեն տամ :” “Հա հա, իսկոյն վեր բերէք դռնապանն,” ըսաւ ազնուականը, “անտարակոյս պիտի ընդունի շահուն կէսը կատարեալ արդարութեամբ :” Ասոր վրայ դռնապանը բերուեցաւ, և սակարկութեան իրեն ինկած բաժինը առնելու ստիպուեցաւ : Յետոյ դռնապանը պաշտօնէն ձգուեցաւ, և ձրկնորսը մեծապէս վարձատրուեցաւ :

Թարգմանեաց յԱմբիբեբեմե ԱԻԵՏԻՍ Է ԱՅՐԱՀԱՄԵԱՆ Պանտրմմա, փետ. 16, 1883

ծուկ, և տարբեր ճամբով մը տուն հասաւ, և մատակարարը վար կանչելով ձեռքն ոսկի մը դրաւ և ըսաւ, “Սա ոսկին տուր այն տղուն որ կը բերէ կովը :” Դուքսը մատակարարին այս պատուէրը տալէն ետքը դարձեալ եկաւ փողոցին ծայրը ուր տղէն բաժնուած էր :

“Վա, ի՞նչ ընդունեցիր,” հարցուց դուքսը : “Շիլլին մը” (վեց դահեկան), ըսաւ տղան, “և ահա անոր կէսը քեզի :” “Բայց շիլլինէ մը աւելի ընդունեցիր,” ըսաւ դուքսը : “Ոչ,” ըսաւ տղան “այդ է իմ բոլոր ընդունածս, և կարծեմ բաւական է :”

«Չեմ կարծեր», ըսաւ դուքսը, «սխալ մը ըլլալու է, և ես դուքսին բարեկամն եմ, ուստի եթէ ինձ հետ դուքսին տունը դառնաս, կարծեմ պիտի ցուցնեմ թէ դու աւելի աւիր»:

Տղան ետ դարձաւ, և երբ դքսին տան դուռը հասան դուքսը զանգալը զարկաւ և հրամայեց որ բոլոր սպասաւորները մէկտեղ ժողովին: Երբ սպասաւորները եկան, դուքսն ըսաւ տղուն, «Յուցուր ինձ այն անձը որ շիւլինը քեզ տուաւ»:

Տղան մատով ցուցնելով մատակարարն ըսաւ, «Սա մարդն էր որ տուաւ ինձ շիւլինը»:

Մատակարարն իւր ծնկաց վրայ դալով խոստովանեցաւ իւր յանցանքը, և ներում ինդրեց, բայց դուքսը հրամայեց անոր ոսկին տղուն տալ, և անմիջապէս զայն սպասաւորութենէ ձգեց, և ըսաւ, «Գաբէութեամբ թէ տեղդ և թէ համբաւդ կորսնցուցեր: Այսուհետև սորվէ որ ուղղութիւնը լաւագոյն ճամբան է»: Անտան տղան գիտցաւ թէ ով էր որ օգնեց անոր կովը տանելու, և դուքսը այնչափ սիրեց տղուն քաջութիւնը և համեստութիւնը, որ զայն դպրոց զրկեց, և անոր ծախքը ինքն հողաց:

Թարգմանեաց Աշխարհիկ  
Ա.ՋԱՐ Լ. ԵՂԻԱՆԱՆ

Պարտիզակ

ԽԱՌՆԱԿԵԱԼ ԿԱՌԺԸ

Անգամ մը միայն պատահեցաւ որ Գէորգ դժկամակեցաւ ընել ինչ որ իւր մայրը կ'ուզէր: Ընդհանրապէս Գէորգ պատրաստ էր ընել ամէն բան իւր մօրը կամաց համեմատ, և երբ մայրը կը կանչէր զնա իրեն օգնել կծիկ շինելու ատեն, Գէորգ կ'օգնէր ուրախութեամբ:

Օր մը, երբ Գէորգ իւր մօրը կարծը կը բռնէր, սակաւ ինչ անհողութեան պատճառաւ կարծը խառնակեցաւ, և Գէորգ զայն շտկելու համար քիչ մ'աշխատեցէ ետքը բարկանալով վերջապէս թէլը կտրեց, և անհամբերաբար կորուսեալ ծայրը վնասուելով ծայրերէն մին գտաւ, բայց որչափ որ կարծը խառնեց, նոյնչափ խառնակեցաւ, և մինչև որ մայրն արգելեց զնա կարծը խառնելէ նա կրտրած էր ուրիշ թել մ'ուս:

«Որդեակ իմ, որդեակ իմ», ըսաւ մայրը, «այդ չէ ճամբան, դուն աւելի դժուարացուցիր, ուղիղ ծայրը բռնէ, և յայնժամ փոքր ինչ աշխատութեամբ կրնանք կարծը շտկել»: Մայրը զայս

ըսաւ և սկսաւ կարծը շտկել, և մինչ կ'աշխատէր այն խառնակեալ գործոյն վրայ, խորհեցաւ թէ ասի պատեհ առիթ մ'էր իւր փոքրիկ որդւոյն մի քանի բարի խրատներ տալու: «Յորչափ կը մեծնաս», ըսաւ մայրն որդւոյն, «գրեթէ ամէն բան խառնակ պիտի երևի քեզ, և եթէ բարկանաս և ինքզինքդ չդպաս, խառնակութիւնը շտկելու համար քու բոլոր ջանքերդ պարապ պիտի ելլեն: Երբ աշխարհի գործոց վերահասու լինիս, պիտի տեսնես այնպիսիներ որ իւրեանց գործոց մէջ փոքր ինչ սխալ մտնք գտնելով կը ցատնուն, և անհամբերութեամբ շտկել ուզելով իւրենց գործն, ինչպէս որ դուն ըրիր, ևս առաւել կը խառնակեն զայն, և կը մեծցնեն հողը, քանզի ուղիղ ծայրէն չեն սկսիր: Անհամբեր, ցասկոտ և բարկացող մարդիկ գործոց սխալ ծայրէն կը սկսին միշտ, և կուրծեամբ յառաջ կ'երթան դժուարութեանց մէջ, և այնչափ յամառ են որ չեն ուզեր ետ դառնալ, և այսպէս իրենց բնավորութեանց հետ կը մաքառին, մինչև որ չարաչար աշխատութենէ կը յոգնին կը մնան: Երբեմն մարդիկ չեն ուզեր երթալ այն ճամբէն, որով կ'ընթանայ աշխարհ: Այսպիսիք չեն տեսներ թէ ինչու ոմանք հարուստ են, և այլք աղքատ: ոմանք պատուաւոր, և այլք անարգեալ: ոմանք երջանիկ, և այլք անարգ ու սղոյմելի: Եստի ամէն բանի դէմ կը արանջեն, ամէն մարդոց վրայ յանցանք կը գտնեն, կը բարկանան և չեն կարող գործ մը ի գլուխ հանել, քանզի ուղիղ ծայրէն չեն սկսիր»:

«Ատենով աշխարհ բոլորովին ուղիղ էր, ինչպէս պէտք էր ըլլալ: Բայց երբ մեղքը մուտ գտաւ յաշխարհ, ամէն բան խառնակեցաւ, և այն օրէն մինչև այսօր ամբարիշտ մատեր ունին այնպիսի խառնակեալ կարծեր որ երբեմն անկարելի կ'ըլլայ զանոնք շտկել»:

Եւ հիմա, որդեակ իմ, չե՞ս տեսներ թէ կեանքը ինքնին խառնակեալ կարծ մ'է՞րեկեալ թելերով: Բայց Աստուած ըսած է մեզ Սուրբ Գրոց մէջ, թէ ինչ ըլլալու ենք և ինչ ընելու ենք: մենք գործին ուղիղ ծայրէն սկսելու ենք, և պիտի յաջողինք մեր բարի գործերուն մէջ անտարակոյս ըլլալով թէ խառնակութիւնը շտտով պիտի անհետանայ, և յայնժամ դիւրաւ պիտի շտկուի կարծը»:

Թարգմանեաց Աշխարհիկ  
Գ. Յ. ՄԱՍԻՍԵԱՆ

Մարտուն

ՊԱՏԱՍԹԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ

Պատիւ ունիմ ներկայիս յայտ առնել Ձեզ թէ Մայիս 1 թիւ մանկանց Աւետարների մէջ դրուած հանելուկին լուծումը ըստ իս է «ՊԱՏԻ» ըսաւ:

Թէև ոսկի չէ, ոչ ալ դո՛հար, բայց մարդիկ շատ կը սիրեն զանի: Յիրաւի չաքար չէ, ոչ ալ ինձոր, սակայն մեղի պէս տղայք շատ կը փափաքին զայն ունենալ, մանաւանդ քննութեանց ատենները: Փնտուողէն կը փախչի, իսկ արժանիներուն ինքը կ'երթայ զանոնք զանելու:

Հինգ տառէ բաղկացեալ է «ՊԱՏԻ», որոյ առաջին տառը Պետրոս առաքելոյն անուան առաջին տառն է, երկրորդ տառը Աբրահամ նահապետին անուան առաջին տառն է, երրորդ տառը Հայոց թագաւորներէն Տիգրան արքային անուան առաջին տառն է, այն Տիգրանին որ Տիգրանակերտ քաղաքը շինած է: Չորրորդ տառն իսահակ նահապետին անուան առաջին տառն է, իսկ հինգերորդ տառն իսրայելի երեւելի թագաւորներէն կամ Սուուզ կամ Դաւիթ թագաւորաց անուանց երրորդ տառն է:

Աշխարհիկ Բողբոլեան Վարժարանի  
(43 տարեկան)

ԵՐՈՒՍԵՆԻ ԽԱՆՏԱՆՆԵԱՆ

Ուրիշ ուղիղ պատասխաններ առինք նաև:

- Պետրոս Բ. Հալաճեանէ,
- Արտաշէս Մարտիրոսեանէ,
- Հովհաննէ Տէր Գէորգեանէ,
- Երման Պեղադրիկ Երէցեան քոյրերէ,
- Վահան Բէհեանեանէ,
- Թ. Հայկ Չառչեանէ,
- Շարամ Կ. Ղազանճեանէ,
- Սարգիս Գուրաքէպապեանէ,
- Թագուհիճա Լուծիկեանէ,
- Միհրան ճգնաւորեանէ,
- Յովհաննէս Գ. Պապիկեանէ,
- Հայկ Մ. Տ. Մկրտչեանէ,
- Սուքիաս Արամեանէ, և
- Յովհաննէս Որբերեանէ:

ԱՆԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն գրով, և Հայ. Տահեղեղ), փոսթայի ծախքով, տարին 6 դահեկան է:

Սմբիկայի Միսիոնարաց ընկերութեան կողմէն  
Խմբագիր  
Ֆելճանճըրա Կօզուշու, Ամս

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈ

ՏՊԱՅԻՆՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՅ

